ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 սեպտեմբերի 2022թ. թիվ 625-Ա

ՊԱՐՈՒՅՐ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով և հաշվի առնելով Պ.Շահվերդյանի 12.09.2022թ. բացատրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Աշխատանքային ժամին առանց վերադասին տեղյակ պահելու աշխատանքից բացակայելու համար «ՀՀ Լոռու մարզի Այգեհատի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Պարույր Շահվերդյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

15/09/2022

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 14
ք.Վանաձոր